ւակայելով, ահագին տներ կ'քանդէ, նոր կ'սկսի շինել, բայց չի կարող կատարել։ Մեծածախ հացկերոյթներով ամեն օր հացկատակները խնճոյքի կ'հրաւիրէ, շռայլ հագուստներով իւր զաւակներ կ'զարդարէ. քիչ ժամանակէ յետոյ դառն աշխատութեամբ վաստակուած դրամը կ'վատնէ, մեծագումար պարտուց տակ կ'ընկնի, եթէ անամօթին մէկն է, կ'զլանայ հատուցանել մնանկութիւն հրատարակելով, իսկ եթէ ամօթխած, կ'թողու իւր ընտանիքը և սիրասուն զաւակները ողբոց և կարօտութեան մէջ, դառնութեամբ սրտի հայրենիքէն կ'մեկնի. կեսաւուբ մայրաքաղաքներ կ'դիմէ ի խնդիր շահու ի հատուցումն պարտեաց։ Մտաւոր կոյրն իւր երջանկութիւնը միշտ հարստութեան մէջ կ'որոնէ. ուստի միշտ իւր վիճակից կ'տրտնջէ. հարուստ մը տեսնելու պէս, թէև անտեղեակ նորա ներքին ցաւերուն, ի խոր սրտէ կ'հառաչէ, բիւրաւոր երանիներ նորա ետևէն կ'արձակէ. մի չը քնաղակերտ տուն կամ՝ պալատ տեսնելու պէս, «Երջանիկ կ'լինէի, եթէ ես ևս այսպիսի մէկը ունենայի», ասելով իւր սիրտը կ'վիրաւորէ, երազայոյս կարծիքներով կ'զգածուի. դու միշտ քարոզէ նորան թէ «մարդս ամեն վիճակի մէջ ևս կարող է երջանիկ լինել, միայն եթէ բաւականասէր լինի»։ Նա չի համոզուիր, և շատ անգամ՝ այսպիսի անկարգ ցանկութեան համար զանազան վտանգաց ենթարկուելով իւր կեանքը չարաչար կ'կորցնէ։

Ահաւասիկ մտաւոր կուրութեան ինքնակար հետևանքները, զոր ի մասնէ թունցի, որոյ ուրիշ բազմաթիւ չարաղէտ արկածները նկարագրել ճարտար գրչաց թողլով։ Սոցանով կարծեմ՝ բաւական կ'հասկացուի թէ ո՛րքան անտանելի է մտաց տեսութեան կուրութիւնն քան զաչաց։

Դաստիարակութի՛ւն դաստիարակութի՛ւն, բարերար արեգա՛կնդ աշխարհի, ե՞րբ պիտի արձակես կատարելապէս քո կենսատու ճառագայթները՝ և լուսաւորես այս կոյրացելոց մտաց թանձրամած խաւարը. որով ճշմարտութեան և ստութեան վերայ որոշ գաղափար ունենալով, խզեն իրենց տգեղութեան, թշուառութեան և բարոյական ստրկութեան կապերը, երջանիկ և բարեբաստիկ կեանք ունենան աշխարհիս վերայ։

Մ՚ՈՂՔ ՊԼՈՒՂԷՆ

ՆՈՐՈԳ ԷԼ ՈՒ ՆՈՐՈԳ ՕՐ
Ո՛Ն ԱՐԱՐԱՏ, ՇՆՈՐՀՈՒՐ։

Ի նաղ ի ճեմ, Արարա՛տ, նորոգ տարի, նորոգ օր
Գայ մեր կենաց յասպարէզ զմուտ գործել նոր ի նոր.
Նոր սահմանին ի գլուխ կացեալ ձգէ զիւր ակնարկ
Դիտել անտի յանցելում՝ զոր գործք եղեն և ձեռնարկ։
Գործոց մերոց զծրար յինքն ամփոփեալ ի կնիք՝
Նորոյն ի ղեկ ձեռնամուխ գայ ի հանդէս գեղեցիկ.
Ցուշիկ ոտից մեղմիկ քայլ՝ զքայլ փոխէ առաջին.
Նշանաւո՛ր քայլափոխ, յոյս մե՞ծ ի գործ Արարչին։
Ժամանակին ի կոկորդ շատից նորոց սուլան խոր
Զնորութիւն մերկացեալ շրջանք արի յայն ի ձոր.
Հետոց նոցին չ'է յերև, չ'է երևոյթ մեզ ի տես,
Գնաց և այս նոր տարի յաւար մատնի նոցայն պէս։
Սապէս կենաց, Արարա՛տ, մերոց նոր օր, նոր արև
Ժպտի թէպէտ ի ծիծաղ, խնդայ ի դէմ գեղերև,
Մութ ստուերին ի ծածկոյթ ունի ծածկել յաւիտեան.
Որոյ երբեն մահացու չ'եղև գիտակ յիւր ի կեան։

Նոր է մեզ արդ, նոր տարի, բազմաղարեա՛նդ Արարատ,
Հնոյն ի վիհ ընկենուլ ի մէնջ ա՛նկ է մեր զարատ,
Զհնանալ զիտելով նորոգ տարւոյս ըստ շատից՝
Մնայ՝ փութալ մեզ ի փոյթ զգործ գործել կենսալից։
Եթէ մշակք ի յայգի կացեալ անգործ վայրապար՝
Ազոլովեն կենաց թել յանգուլ վաստակ օգտակար,
Ծառոց անդէն և բուսոց թէ մոռացեն զինամ՝,
Նոցա զօգուտ որպիսի՞ քաղել ելցէ յիւրն ի ժամ։
Եթէ կենաց մեր յայգի կացցուք մշակ միշտ յումպէտ,
Զբարութեան մշակել գործոց պտուղ բեղմնաւէտ
Զանց առնիցեմք ի գարնան, մինչ Արեգին ցոլայ լոյս,
Ցայնժամ արդեօք զորպիսի՞ մեզ ի Նորոյն ունել յոյս։
Ժամանակաց, Ազգաց փորձ և կեանք իսկ մեր վաղանցուկ
Զայնէ գործել զբարիս, թէև ուղին է անձուկ.
Զկենսաշահ ձեռնարկաց փութալ կազմել զտաճար,
Զի միշտ պտուղք քաղիցէն, պտուղք բարի կենսարար։
Նոյնա՛ն դու ծեր Արարատ, շնորհաւոր նոր տարի,
Երկինք տացեն քո որդւոց ընթացս յաջող ի բարի,
Նորոգ ահա՛, նորոգ ժամ՝, նորոգ տարի, նոր և օր,
Հայցեա՛ յԵրկնից ընդ Նորոյս վեճակ որդւոցդ ի բարօր։
Զի սիրտ ի մի, մի յոգի կացցո՛ւք յաւէտ միաբան,
Կացցո՛ւք ի շահ, ի նպաստ մեր Հայութեան անբաժան.
Գնա՛ բարեաւ, Արարա՛տ, փութա՛ ընդ ծով և յալիս
Հայկազնէից ի տարփոխ նորոյս ձայնել զաւետիս։

Յովհաննէս Մ՝ղէղեան

ՅԱՂԷՏՈՆԴՐՈՊԼԻ։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ԳԱՑԻԱՆԻ ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ։

Վ. Եկ. Կաթողիկոս բարեհաճեցաւ ոսկեթել ծոպով զարդարեալ մի սաթեայ համրիչ ընծայել Տփխիսայ Ս. Աստփ. Վանուց Կուսանոցի Վանահայր Համեստափայլ Գայիանէ Ուսուցչուհոյ Ռէհպութեանց ի վարձատրութիւն անձնանուէր ջանիցն վասն շինութեան Եկեղեցւոյ յիշեալ վանուց, և ի քաջալերութիւն հաստատելոյ և բարեկարգելոյ զօրիորդական դպրոց մի ըստ առաջարկութեան Նորին Վ. Եկ. Օծութեան։